

### **1.2.7. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ (սպառողական շուկա)<sup>8</sup>**

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 12 աշխատանքները (127001-127012 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ (7 ամսական, 1 եռամսյակային, 4 տարեկան):

Սպառողական շուկայի գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են թվով 12 պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերով (որոնցից 9-ը՝ մանրածախ առևտրի (5-ը՝ ամսական, 1-ը՝ եռամսյակային և 3-ը՝ տարեկան պարբերականությամբ), 2-ը՝ ծառայությունների (ամսական պարբերականությամբ) և 1-ը՝ մանրածախ առևտրի և ծառայությունների գծով (տարեկան պարբերականությամբ):

Հանրապետության սպառողական ապրանքների շուկաներում պարբերաբար անց են կացվել ընտրանքային դիտարկումներ ըստ ապրանքային խմբերի (պարենային, ոչ պարենային), վաճառատեղերի քանակի, մեկ վաճառատեղի մեկ օրվա ապրանքաշրջանառության ծավալի: Ընտրանքային դիտարկման նյութերն օգտագործվել են տեղեկատվական ամսական զեկույցներում:

ՏԳՏԳ-ին անցումով պայմանավորված, աշխատանքներ են իրականացվել առևտրի և ծառայությունների ոլորտների գործունեության տեսակների վերածածկագրման ուղղությամբ:

---

<sup>8</sup> Տես՝ Ծրագիր, Հավելված I: